

ամբողջությամբ սրտի մը չարչարանքներուն պէս կը շնչեն ուրախութեան եւ դժալտանքի երկինք ձկնող բոցերուն վրայ, առանց կարենալու մարել, որովհետեւ բուն այդ ոչնչութեան մէջ պիտի փառաւորուէր Ս. Կոյսը, Բարձրացի պատիւ քն ինք եւ ցուցցի փրկութիւն իմ քեւ (Բան 2): Նա-
րեկացին հետեւաբար ամէն բանէ առաջ իբրեւ ողբերգակ մըն է որ կը յայտնուի:

Ամէնէն զարմանալին, սակայն, իր մէջ է այն «առանձին լուսնի» մը սիրտած խորհրդաւոր լոյսը որ, ինչպէս կ'ըսէ արդի հեղինակ մը(9), «մոգական երեւոյթ մը կու տայ իր դժուարամուտ անտառի մը նմանող գործերուն»: Ան արդիւնք մը չէ մի միայն իր «լեզուական ամենազան ձեւերուն», որոնք իր ոճը նկարչական հրապոյրով կ'օժտեն». կամ միայն իր հզօր զգայականութեան եւ երեւակայութեան, որոնք կը զգազարդեն տեսանելի եւ

զգալի ընկելով ամէն բան, սրտէն բղխեցընելով ու մարդուն սրտին խօսելով. եւ ոչ լոկ մեծ իմացականութեան մը, որով տիրացած զիտելիքներու աշխարհին կրցեր է թափանցել եւ իրենց մեծութեան մէջ ներկայացնել իրերը: Այլ ամէնէն աւելի արդիւնք է կարծեմ բնութեան ուժերէն վեր բանի մը, զերբնական լոյսի մը հրապոյրին, որուն ծագումը եթէ փնտռենք, պիտի դռնենք զարմեալ Վանի լճակի ալիքներուն մէջ. հոն ուր Նարեկի մօտ ապառաժներու մէջ փորուած իր ճգնարանէն տեսաւ օր մը փրկինքը հրդեհուած եւ անպատու բան որ ճառագայթարձակ նըշոյլներով ծովուն ոսկէ կոհակներուն վրայ կը ցոլար: Ծանցցաւ Նարեկացին երկնային նշանը, իջաւ փութով իր ճգնարանէն եւ ծովու ջուրերուն՝ իբրեւ ցամաքի վրայէն քալելով, հասաւ անձկադին փոքրիկ կղզի մը եւ հոն դաւալ իր Տիրամայրը որ Առ զՏէր քն ըսելով իր դրկերուն մէջ դրաւ իր անմահ Աստուածորդին:

Հ. ՅՈՎՍԵՓ ՊԵՆԵՍՆԻԼԵԱՆ

(9) Պատմ. Հայ գրականութեան, Հ. Կ. Քրպարեան, էջ 247: Իրմէ տեսնուած են չափերսով միայն եղած մէջերութիւնները:



ԼԵՈՆԱՐԺՈՅ ԿԱՎԻՆՉԻ. - Աւետում (Լուվր).
LEONARDO da VINCI L'annonciation (Louvre).

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՎԱՆՔԵՐ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ

« Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ,
Մայր Քրիստոսի մատո՞ զաղաչանս մեր
որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ »:

Աստուածածնի ջերմեռանդութիւնը հայոց մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի օրերէն կը սկսի:

Հեթանոս հայերը ունէին Անահիտ ճաստուածուհին, որուն ստորոգելիներն էին ոսկեծին, ոսկեհատ, մայր ամենայն զգաստութեանց, կեցուցիչ հայոց, եւն.:


Հայաստան քրիստոնէութիւնը ընդունելով Աստուածածնի հանդէպ բարեպաշտութիւնը շատ բնական երեւոյթ մը փոխառեց հայերուն համար: Կեցուցիչ Հայոց եւ Մայր ամենայն զգաստութեանց անվանները խիստ լաւ կը պատշաճէին Աստուածածնի:

Աւանդութիւնը զոր հայերը ունէին Տիրամօր փերափոխման մասին, մուտ դործած է մեր մէջ քրիստոնէութեան առաջին դարէն խել, Թովմաս Առաքելի միջոցաւ, որ այցելած էր Աստուածածնի զերեզմանը, անոր թաղումէն ութ օր յետոյ եւ զազաղը գտած պարապ, մարմինը երկինք փոխադրուած: Իսկ Գիւտ Տփոյ եւ Գիւտ Գօտույ տօները, նոյնպէս Աստուածածնի յատկացեալ շարականներ ու մաղթանքներ, պատշաճ արարողութեամբ կարգ ու կանոնի դրաւ Ներսէս Շնորհալի հայրապետը:

Շնորհալիին Աստուածածնի պաշտամունքին յատուկ այս կարգադրութեանց իբր հետեւանք, Կիլիկիոյ մէջ մենք ունեցանք տասնէ աւելի հռչակաւոր վանքեր, նուիրուած Աստուածածնի անուն: Աստուածածնի յայտնին ու նշանաւորն էր Սաղրուի Ս. Աստուածածին վանքը: Սաղ-

րուի վանքը կը գտնուի Լամբրոն բերդին արեւելակողմը, խոր ձորի մը մէջ Ժեռակոյ գետին աջ ափին վրայ: Առ նուազն կէս ժամէ աւելի ձիւ վայրէջքով մը անտառներու մէջէն պէտք է անցնիլ, հասնելու համար ձորամէջի գետակին: Այս վայրը այժմ կը կոչուի Ճիւղեմեմ տէրէսի: Այլիդ Կուկլա կայ ձիւնապատ լեռը, ձախիդ Պուղլար Տաղի նոյնպէս ձիւնապատ ժայռերը, եւ այս երկու հսկայ լեռներուն միջեւ հաղիւ յիսուն մեղր լայնքով երկար ձոր մը, որուն արանքէն կը հոսի Ժեռակոյ գետակը: Այս անմատոյց գիւղին վրայ շինուած է Սաղրուի Սուրբ Աստուածածնի վանքը: Վանքին հիմնարկութեան թուականը անյայտ կը մնայ, բայց Ներսէս Լամբրոնացիի պատանեկութեան շրջանին, Յովհաննէս Վարդապետ անունով գիտնական վանական մը վանահայր էր Սաղրուի վանքին, որուն քով գնաց աշակերտելու Լամբրոնացին, տասնըոթ տարեկան հասակին, եւ ուր ուսման պաշարը լման ամբարեղէն յետոյ 16 տարեկանին սկսաւ գրել մեկնութիւններ, թարգմանութիւններ կատարել յունարենէ եւ պատրաստել իր հոստորական հռչակաւոր ճառերը:

Լամբրոնացիին մայրը՝ Ծահանդուխտ իր երկու աղջիկներուն հետ, Ծուշանի եւ Տալիթայի, յաճախ կ'այցելէր վանքը՝ որ հաղիւ երեք ժամ հեռավորութիւն ունէր Լամբրոնի բերդէն: Այժմ այս հռչակաւոր վանքը աւերակոյտ մըն է, որուն շուրջ վայրի ընկուզներն, կեռասներն ու փշոտ



ԾՆՈՒՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ և ՄՈԳԵՐՈՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ՝
Աստուածաշունչ Մկրտիչ Նազաչի. Թ. 280. ամ. դր. 1418. (Հաւաքածոյ Զեռադրաց Ս. Ղազարու.)

NATIVITÉ de N. S. J. CH. et ADORATION des MAGES.
Bible de Megherdich Nagache, N° 280, an 1418. (Coll. des Manuscrits de St. Lazare).

Թութեր կը հսկեն: Այս սրբափայլը Կեա-
վուր Պաղչէսի անունով ծանօթ է հիմա:

Սկեւոյի Ս. Աստուածածնի վանք

Սկեւոյի վանքը կը գտնուի հարաւ ա-
րեւելեան կողմը, «անմատոյց բերդին
Լամբրոնի», գրեթէ ժամուկէս հեռաւո-

րութեան վրայ: Վանքը ունի երկու եկե-
ղեցիներ եւս, Ս. Խաչ եւ Ս. Նշան անու-
նով:

Պատմութենէն մեզի ծանօթ է որ քրիս-
տոնէական առաջին դարերուն Հայաստա-
նեայց Եկեղեցին կ'ունենար մէկ խորան:
Բիւզանդացիներու ազդեցութեան ներքեւ

մեր եկեղեցիները եւս ունեցան յետագա-
յին մէկէ աւելի խորաններ, տարբեր ա-
նունով սուրբերու յատկացում, այնպէս
որ իմ կարծիքով Սկեւոյի վանքը ունէր
մէկ եկեղեցի երեք խորաններով, որոնցմէ
երկու խորանները կը կոչուէին Ս. Խաչ
եւ Ս. Նշան: Այս ենթադրութեան կը յան-
գիմ նկատի ունենալով աւերակուած
Սկեւոյի վանքին տարածութիւնը: Իրա-
կանին մէջ ընդարձակ աւերակոյտ մըն է
Սկեւոյի, բայց կարծես խուցերը եւ հիւր-
ընկալ սենեակները աւելի տարածուն են
քան իսկական տաճարը:

Ս. Աստուածածնի ձօնուած Սկեւոյի
վանքը յունական ճարտարապետութեան
ոչ մէկ հետք կը կրէ, հակառակ Հ. Համա-
ղասոյ Ոսկեանի կարծիքին, որ Սկեւոյ
բառին ալ յունական ծագում կու տայ:
Այս մասին ուրիշ առթիւ պիտի անդրա-
դառնանք:

Վանքը Հեթումեաններուն ձեռակերտն
է. եթէ ոչ Օշին Բ. իշխանը, գոնէ Օշին
Ա. շինած ըլլալու է զայն, որ միեւնոյն
ատեն ընտանեկան դամբարան ըրած,
ինչպէս որ Տարսոնի Ապղարիպ իշխանը
Պապիոնի բերդին մօտակայ Մլիճոյ վան-
քը, որ նոյնպէս Աստուածածին անունը
կը կրէ, իր ընտանեկան դամբարանը ը-
րած էր:

Պապիոնի բերդին մօտ գտնուող Մլի-
ճոյ վանքը, հաւանական է որ յունական
վանք մը եղած ըլլայ նախապէս, երբ նը-
կատի առնենք կառուցուածքին արտաքին
ձեւը, բայց Սկեւոյի ոչ մէկ յունական
դրոշմ ունի:

Լամբրոն բերդին մօտը ունինք նոյնպէս
վանք մը Արմէն լեռան կողքին, որ կը կոչ-
ուի Յովհաննու անապատ, բայց իրակա-
նին մէջ Ս. Աստուածածնի ձօնուած եւ
այդ անունով ալ ճանչցուած է:

Ներսէս Լամբրոնացիի մահուրէն յի-
տոյ կամ իր մօրը Շահանդուխտի եւ կամ
երկու քոյրերուն Տալիթայի եւ Շուշանի
կողմէ Կուսանոցի վերածումը է, բայց

միշտ պահած է Աստուածածնի անունը:

Արեւմտեան Լեւոնային Կիլիկիոյ մէջ Ս.
Կոյսին յատկացուած վերոյիշեալ չորս
վանքերէն զատ — Սաղրու, Սկեւոյ,
Յովհաննու Անապատ, Մլիճոյ —, մենք
ունինք նաեւ հիւսիսային Լեւոնային Կի-
լիկիոյ մէջ հետեւեալ վանքերը, որոնք
նոյնպէս կը կրեն Ս. Աստուածածնի ա-
նունը: Ասոնցմէ առաջինն է ԱԿՆՅՐ կամ
ԱԿԱՆՅ Ս. Աստուածածնի վանքը:

Ակներ վանքը կը գտնուի Վահկայի հիւ-
սիս արեւմտեան կողմը, «առ ստորոտով
Բարձր բերդի»: Վանքը հիմնադրուած է
Լեւոն Մեծագործի կողմէ, ուր ստէպ
կ'այցելէր: Լեւոն Մեծագործի սիրտը այս
վանքին մէջ թաղուած է:

Ակներ վանքը մեծ հռչակ ունէր բո-
վանդակ հայկական Կիլիկիոյ վանքերուն
մէջ: Գրիգոր Անաւարդացիին հիացումով
կը խօսի Ակների մասին, «Զապիսկոպոս-
ներն եւ խորագէտս Ակներոյն» ըսելով:

Այս վանքին մէջ զարգացաւ հայկական
մանրանկարչութիւնը, նոյնպէս բաղմա-
թիւ ձեռագիրներու ընդօրինակութիւնը,
որ տեւեց հարիւր քսան տարիներ շարու-
նակարար:

Արեւադարձի վանքը

Վահկայի եւ Սիսի մէջտեղերը կը գրա-
նուի Արեւադարձի վանքը ԽՃԿՏՈՐ կամ
ՀԱՃԿԱՏԱՐ Ս. Աստուածածին անունով,
որուն մէջ իր ուսումը առած է Վարդան
Այգեկցին: Այս վանքի մասին մեծ գովա-
տով կը խօսի Յովհաննէս Երզնկացին.
«Հռչակաւոր այս տեղի, մենաստանս մեծ
ի բարձրութիւն ժայռից լեռանց, դրախտ
Աստուծոյ» —: Այս վանքը նշանաւոր էր
հայկական երաժշտութեամբ, որ այն ա-
տենները մանրուսմունք կամ կցուրդ
կ'անուանէին: Իշխան Ստեփանէս եւ Գրի-
գոր Ապիրատ կաթողիկոսը հոս թաղուած
են:

Գրազարկի վանքն ալ կը կրէր Ս. Աստ-
ուածածնի անունը:

Այս նշանաւոր լեռնապատ վանքը կը գտնուի «առ ստորոտով լերինն Տաւրոսի որ ի մերձ յանմատոյց ամուրն որ յունա-կան լեզուաւ Կոտիտառայ անուանի», ար-դի Թաւրան անունով թրքաբնակ զիւղին մօտ:

Այս վանքին մէջ թաղուած են Թորոս Ա., Բ., Գ. իշխանները, Ռուբէն Բ. իշ-խանը, Հեթում Ա. եւ Զապէլ թաղու-հին, Գրիգոր Տղայ, Գրիգոր Քարապէտ, Յովհաննէս Մեծաբարոյ, Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսները, եւ նշա-նաւոր մանրանկարիչ Սարգիս Պիծակ եւ Մեղրիկ վարդապետները:

Հատ Ալիշանի, Թիւրքի կարմիր լերին եւ Զերմաղբիւրի վանքերը եւս Աստուա-ծածին անունը կը կրեն. առ այժմ այս վանքերուն տեղերը անծանօթ ըլլալով, լիակատար տեղեկութիւններ կը պակսին մեզի:

* * *

Կիլիկիոյ մէջ վերջերս կանգուն մնա-ցած չորս վանքեր միայն ունէինք. Հաճը-նի, Փրնուզի եւ Զէյթունի երկու վանքե-րը: Այս վանքերէն Զէյթունի Ս. Աստուա-ծածին վանքը կատարեալ ուխտատեղի մըն էր Մարաշի, Այնթապի եւ շրջակայ հայութեան համար, ուր Տիրամօր տօնին հաղարներով ուխտաւորներ կը հաւաք-ուէին, երբ ու պարերով ուրախութեան օրեր անցընելու:

Գաղթի օրերուն, 1915-ին, Թուրքին ա-նիծեալ թնդանօթները քարուքանդ ըրին

այս վանքը եւս, ինչպէս ըրին Հաճընի, Փրնուզի ու Աշոտի վանքերը: Այժմ Կի-լիկիոյ մէջ կանգուն մնացած ոչ իսկ մէկ վանք ունինք:

Վերջացնելէ առաջ, Կիլիկիոյ մէջ գլու-նուող եւ Ս. Աստուածածնի անունն նը-ւիրուած վանքերու այս ցանկը, կ'ուզեմ հոս ներկայացնել Տիրամօր հրաշագործ պատկերի մը պատմութիւնը եւ անոր ար-կածալից ողբերգութիւնը, որ տեղի ունե-ցաւ 1101 թուականին, Մարաշի մէջ:

Մարաշի հայ թաղի Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ կը գտնուէր Տիրամօր հըռ-չակաւոր հրաշագործ պատկեր մը. Խա-չակիրները երբ գրաւեցին Մարաշը, տեղ-ւոյն հայ իշխան Թաթուլը, չուզելով որ այդ հրաշագործ Աստուածածնի պատկերը Խաչակիրներուն ձեռքը անցնի, իր հետը առած կը մեկնի Մարաշէն եւ կը ծախէ զայն Թորոս Ա. իշխանին:

Թորոս, Անաւարդայ ամբակուռ բերդին մէջ իր նոր կառուցանել տուած Զօրավա-րաց եկեղեցին կը դնէ հրաշագործ Աստ-ուածածնի պատկերը եւ այս կերպով կ'ա-զատէ սրբութիւն մը որ Կիլիկիան աշխար-հի ամենամեծ պարգեւն էր:

Հայ ժողովուրդը իր վանքերովն ու ե-կեղեցիներովը ջերմեռանդութիւնն ունե-ցած է միշտ Ս. Կոյսին հանդէպ, վկայ Աստուածամօր նուիրուած վանքերն ու եկեղեցիները եւ զմայլելի շարաւիտները:

Տոքթ. Յ. ՏԵՐՂԱՋԱՐԵԱՆ

Հալէպ

ՄԻՒԹԱՐ ԱՐԲԱՆԱՅՐ (*)

ԵՐԱԺԻՇՏ

Ս. Կոյսին Անարատ Յղութեան այս Առաջին Դարադարը, Ն. Ս. Պիոս ԺԲ-է «Տիրամօր Տարի» հոչակուած, բարեբաստիկ առիթ մը կ'ընծայէ, որ ամբողջ կաթողիկէ աշխարհի խանդավառ արտայայտութիւններուն մէջ խառ-նուի նաեւ Միսիքարայ Միաբանութեան համեստ բաժինը:

Նա մանաւանդ որ Ուխտիս Երանաշնորհ Հիմնադիրն է որ կ'ուզէ ձայնել ցնծութեան իր օրհներգը, եւ իրմով իր որդիները. օրհներգ մը իր հոգեկան ցոլքերով ընդելուզուած, օրհներգ մը՝ արտայայտուած իր պերճիմաստ խո-հերով եւ սրտեռանդն զգացումներով, որոնք կը բարձրանան դէպի Այն՝ որ կուսական «Եղիցի»ովը յոյս աշխարհ բերաւ Միսիքարի Ձեռակերտը եւ առաւ ուղղակի իր մայրենի խնամքին տակ:

Ահա՛ ինչ որ նպատակը պիտի ըլլայ այս փոքրիկ մատենիս, ուր Միսի-քարայ երաժշտական ձիրքերու ամփոփ պատկերին հետ յոյս կ'ընծայենք նաեւ իր մէկ քանի տաղերը՝ իրմէ եղանակաւորուած եւ այժմ մեզմէ գրի առնուած երաժշտական խաղերով եւ ապա ներդաշնակուած Նափոյի Պետական Երա-ժըշտանոցի Ուսուցչապետ եւ երգահան Անդրանիկ Զէյէի կողմէ:

Ասոնք մոռացութենէ փրկուած երգեր են, որ աւանդաբար հասնելով մեզի՝ կը մնան այժմ իբր սրբազան նշխարներ, որովհետեւ — ինչպէս կը վկա-յեն իր կենսագիրները — Միսիքարայ Տաղերէն եթէ ոչ ամէնքը՝ բայց գէշ շատերը երգի առնուած են իր կողմէ, որոնք, աւա՛ղ, անհետացած են հետա-գայ ժամանակին, ու կը մնան այսօր մեզի միայն այս վերապրած երգերը:

Ուստի Ամէնօրհնեալ Կոյսին ընծայուած այս սրբազան Հարիւրամեակին առթիւ յարմար կը դատէ Միսիքարայ Միաբանութիւնը՝ այս հրատարակու-թեան միջոցաւ բերել իր խոնարհ մասնակցութիւնը, ձայնակցելու համար կատարուելիք միջազգային եռանդուն ցոյցերուն՝ իր իսկ Հիմնադրի քնարին ձայնովը, բարձրացնելով միանգամայն իր բոլոր որդիներու ջերմեռանդ զգա-ցումներն ու երախտագիտութիւնը առ Տիրամայր մեր «Պահպանիչ Որդեգրաց»:

(*) Այս յօդուածը առաջին մասն է այն ուսումնասիրութեան, որ նուիրուած է Երնչ. Միսիքար Արքաճօր երաժշտական կարողութեանց եւ դործերուն: Միսիքար Արքաճօր շարա-կաններով եւ տաղերով փառաւորած է Ս. Կոյսը: Յօդուածին այս մասին մէջ կը խօսուի Ս. Կոյսին նուիրուած շարականներու վրայ: Մնացածը ամբողջութեամբ պիտի հրատարակուի իր երգերուն հետ առանձին հատորով:

ԽՄԲ.